ԴԻԱԿԻԶՈՒՄ

(քննարկման նյութեր)

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԻԱԿԻԶՈՒՄ

(քննարկման նյութեր)

Սբ Էջմիածին 2013

Սույն գրքույկը ներկայացնում է ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում կազմակերպված «Դիակիզում» թեմայով քննարկման (7 հունիսի 2013 թ., Սբ Էջմիածին) նյութերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան …….…..…5
Քննարկման մասնակիցների ցանկ……...…..7
Զեկույց Ա- Դիակիզում. նոր մարտահրավե՞ր… …..… 9
Զեկույց Բ – Գերեզմանոցներ, դիակիզարաններ, թե՞ այլ լուծումներ: Ավանդույթի ու արդիականացման միջև ..17
Ամփոփում……..... 39
Հավելված Ա – ՀՀ Օրենքը հուղարկավորությունների կազմակերպման, և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին ……..……41

ՆԱԽԱԲԱՆ

2013 թ. հունիսի 7-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում նախաձեռնությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Դիակիզում» թեմայով քննարկում:

Դիակիզման և դիակիզարանների հարցը սկսվեց լայնորեն քննարկվել հայաստանյան հասարակության մեջ, երբ շրջանառության մեջ դրվեց, ապա ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց «ՀՀ Օրենքը հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին»: Խնդիրը հասարակությանը մատուցվեց նախ գերեզմանատների և ապագայում հուղարկավորությունների համար հատկացվելիք հողերի սակավության պատճառաբանությամբ հանդերձ, ինչը որոշակիորեն երկրորդ պլան մղեց խնդրի ազգային-հոգևոր ընկալումները: Սակայն դրանք դարձան հասարակության տարակուսանքի հիմքը:

Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցին դիակիզման հարցում միակարծիք չէ; Կաթոլիկ Եկեղեցին, կանգնելով դիակիզման փաստի առջև, հատկապես այն երկրներում, ուր դիակիզման պրակտիկան ամրագրվեց օրենքով, ժամանակի մեջ մշակեց անհրաժեշտ արարողակարգերը, որոնցով չընդունեց, սակայն նաև իսպառ չմերժեց երևույթը և

չխրախուսելով հանդերձ հարկ համարեց անգամ այդ դեպքում հոգևոր աղոթական խնամք իրականացնել:

Ուղղափառ Եկեղեցին առ այսօր ուղղակիորեն մերժում է այս գաղափարը և անթույլատրելի է համարում արարչաստեղծ մարմնի դիակիզումը: Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին այս կապակցությամբ դեռ պաշտոնապես իր դիրքորոշումը չի հայտնել, թեև պարբերաբար անհատ եկեղեցականների շուրթերից հնչում են երևույթի նկատմամբ բացասական գնահատականներ, որոնցով և հիմնականում կողմորոշվում է հայ հասարակությունը: Սակայն գործնական՝ հովվական կյանքում կարծեք թե դիրքորոշումն արդեն իսկ արտահայտվել է՝ հար և նման ուղղափառ մոտեցմանը, որովհետև Եկեղեցու իշխանությունն արգելել է դիակիզված մարմնի վրա թաղման ծեսի իրականացումը: Հոգևոր հովիվներին արտոնվել է նման պարագաներում միայն հոգեհանգիստ կատարել մինչև հանգուցյալի դիակիզումը:

Այսուհանդերձ, խնդիրը շարունակում է մնալ չլուծված և կարոտ է լուրջ ուսումնասիրության: Դիակիզման հարցը մեր համոզմամբ պետք է դիտարկել տարբեր հարթություններում՝ աստվածաբանական (փրկաբանական ու վախճանաբանական առումներով) և հովվական, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի մշակել Եկեղեցու պաշտոնական կեցվածքն այս առնչությամբ:

Ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում քննարկման ժամանակ հնչած զեկույցները և եզրահանգումները:

Վահրամ քահանա Մելիքյան

«ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՍՐԱՀ» ծրագիր
Քննարկում Գ
ԴԻԱԿԻԶՈՒՄ

(7 հունիսի 2013 թ., Մայր Աթոռ Սբ Էջմիածին)

Զեկուցողներ՝

ա. **Տ. Երեմիա աբեղա Աբգարյան**
(Մայր Աթոռի Դիվանատան Եկեղեցի-հասարակություն բաժնի պատասխանատու)

բ. **Հովհաննես Հովհաննիսյան**
(ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ)

Մասնակիցներ՝

ա. **Տ. Շահե վարդապետ Անանյան**
(Մայր Աթոռի Պաշտոնական մամուլի բաժնի տնօրեն, Գևորգյան հոգևոր ճեմարանի (ԳՀՃ) դասախոս)

բ. **Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյան**
(Ծիսահայեցակարգային գրասենյակի պատասխանատու)

գ. **Տ. Աղան աբեղա Երնջակյան**

դ. **Տ. Ղևոնդ քահանա Մայիլյան**
(աղանդագետ, ԳՀՃ դասախոս)

ե. **Տ. Վահրամ քահանա Մելիքյան**
(Տեղեկատվական համակարգի տնօրեն)

զ. **Ավետիս Քալաշյան**
(ԳՀՃ պատմական աստվածաբանության ամբիոնի վարիչ)

է. **Հրաչ սարկավագ Սարգսյան**
(ԳՀՃ աստվածաբանության ամբիոնի վարիչ)

ը. **Հեղինե Մկրտչյան**
(Տեղեկատվական համակարգի խմբագիր)

թ. **Մարիամ Ավետիսյան**
(«Առավոտ» օրաթերթի լրագրող)

ԶԵԿՈՒՅՑ Ա

Տ. Երեմիա աբեղա Աբգարյան
Մայր Աթոռի Դիվանատան Եկեղեցի-հասարակություն բաժնի պատասխանատու

ԴԻԱԿԻԶՈՒՄ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵ՞Ր...

Դեռևս վաղնջական ժամանակներից ննջեցյալներին հուղարկավորելու տարբեր եղանակներ են պահպանված նյութական և մատենագրական հուշարձաններում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախաքրիստոնեական ժամանակներից ի վեր աշխարհի շատ ժողովուրդների կենցաղում գոյություն են ունեցել թաղման տարբեր եղանակներ՝ կախված այն հանգամանքից, թե այդ ժամանակաշրջանում մարդիկ ինչ հավատալիքներ են ունեցել հետմահու կյանքի վերաբերյալ:

Մի շարք դեպքերում հանգուցյալների մարմինները դրվել են դամբարաններում, երբեմն դիակն այրվել է, այնուհետև աճյունն ամփոփվել է, որոշ դեպքերում էլ դին մասնատելուց հետո է թաղվել: Ըստ այսմ՝ առանձնացված են թաղման հետևյալ եղանակները.

1. դիաթաղում
2. դիամասնատում
3. գլխի թաղում
4. երկրորդվող դիաթաղում (վերահուղարկավորում)
5. հուշաղամբանային «թաղում»
6. դիակիզում:

Թվարկված այդ եղանակնակներից հարկ է մասնավոր կերպով անդրադառնալ վերջինին՝ դիակիզմանը:

Ինչպես նշվեց, դիակիզումը, որպես թաղման տեսակ, տակավին հին ժամանակներում տարածված երևույթ էր: Կրակը, որը մահացած մարդու մարմնի այրման համար էին կիրառում, իր մեջ խորհրդանշական իմաստ ուներ. հին պատկերացումներով՝ կրակն ուներ վերածնող էություն: Այն ոչ միայն արագացնում էր «մարմնական կապանքներից» հոգու ազատագրումը, այլև մաքրագործում էր մարդուն: Դրանով իսկ կրակը, հավանաբար, կոչված էր ապահովելու մարդու վերածնունդը կամ նրա մուտքը դրախտ: Կարծիք կա նաև, որ նույն մտածելակերպից ելնելով էր, որ զոհաբերությունները դրվում էին դիակիզման խարույկի վրա: Թաղման ծեսի մաքրագործման ծիսակատարության համակարգում դիակիզման կիրառումը կրակի դերի աստիճանական ուժեղացման տրամաբանական ամփոփումն էր:

Քրիստոնեության ընդունումից հետո հայ իրականության մեջ դիաթաղումից բացի այլ եղանակներ չեն կիրառվել: Եւ եթե գոյություն են ունեցել թաղման այլ եղանակներ, ապա դրանք իսպառ վերացել են: Հարկ է նշել, որ թեև Ղևոնդ Ալիշանը մերժում է դիակիզման պրակտիկան նախաքրիստոնեական Հայաստանում, սակայն պեղումները բոլորվին այլ բան են ապացուցում: Ամենայն հավանականությամբ՝ հայերն այս սովորույթը վերցրել են հույներից: Ժամանակակից մտածողներից Ժ. Խաչատրյանը «Դիակիզումը Հայաստանում (մ.թ. ա. II- մ.թ. III դ.դ.)

աշխատության մեջ նշում է, որ դիակիզումը Հայաստանում նորություն չէր։ Այն հանդիպում է դեռևս վաղ, միջին և ուշ բրոնզեդարյան, և վաղ երկաթեդարյա շրջաններում: Դիակիզման պատճառները կարող էին տարբեր լինել: Այն կարող էր արդյունք լինել ռազմական և քոչվորական կյանքի պայմանների, որոշակի կրոնական աշխարհայացքի, նեխող մարմնի հանդեպ հարգանքի, հոգու նկատմամբ երկյուղածության, հոգուն օգնելու ցանկության: Օրինակ՝ հռոմեացիները դիակը այրել են, որպեսզի հոգին որքան հնարավոր է շուտ վերադառնա իր նախանական վիճակին: Սա արել են նաև այն բանի համար, որպեսզի անդրշիրիմյան կյանքում հոգին իրեն լավ զգա:

Խաչատրյանը նշում է նաև, որ թեև Հայաստանում դիակիզումը պահպանվել է մինչև քրիստոնեության ընդունումը, սակայն դրա հետքերը վերապրումային ձևով գոյատևել են մինչև 20-րդ դարի սկզբները: Օրինակ՝ հայ ազգագրության մեջ պահպանվել են որոշակի տեղեկություններ դիակիզման եղանակի արձագանքների վերաբերյալ: Անցած դարասկզբին խոյեցիները թաղումից անմիջապես հետո գերեզմանաթմբի վրա ցախ էին դարսում և վառում, իսկ Գանձակի Բանանց գյուղում նույնն անում են երեկոյան: Որոշ վայրերում թաղման հաջորդ օրվա առավոտյան այգ կատարելիս մահացածի հարազատները գնում էին գերեզմանոց, որտեղ կանանցից մեկը ջուր էր լցնում շիրիմին: Բացառված չէ, որ այս սովորությունը դիակիզման հաջորդ օրվա համապատասխան արարողության արձագանքը լիներ:

Ք. հ. 400 թվականին, երբ եւրոպական ժողովուրդների մեծ մասն ընդունեց քրիստոնեություն, դիակիզումը փոխարինվեց հողի մեջ թաղումով: 785 թվականին Կարլոս Մեծը մահվան սպառնալիքով արգելեց դիակիզումը, և այն մոռացվեց գրեթե մեկ հազարամյակ: 18-րդ դարի 2-րդ կեսից քրիստոնեության նկատմամբ անտարբերության մթնոլորտում Եվրոպայում վերականգնվեց դիակիզումը: 1869 թվականին «Համաշխարհային բժշկական կոնֆերանսը» Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում ընդունեց մի համաձայնագիր, որով կոչ էր արվում դիակիզման լայն տարածմանը՝ դիակիզումը դիտելով իբրև «կենդանի մարդկանց առողջությանն ու երկրի պահպանմանը» նպաստող միջոց:

Բժիշկների նման կոչն ընդունելություն գտավ Եվրոպայի, ԱՄՆ-ի, Ավստրալիայի և մի շարք այլ երկրների հասարակությունների կողմից: Այնուհետև մի շարք պետություններ, համաձայնագրի ընդունումից զատ, ձեռնամուխ եղան դիակիզարանների կառուցմանը և համապատասխան միությունների ստեղծմանը:

1918 թվականի դեկտեմբերի 7-ին ՌՍՖՍՀ կառավարության որոշմամբ ՍՍՀՄ-ում դիակիզումը օրինական է հռչակվել: Հարկ է նշել, որ այդ տարիներին դիակիզումը՝ որպես երևույթ, չի թափանցել հայ իրականություն: Այսօր, սակայն, երբ հայ ժողովուրդն ազատվել է օտարի լծից, և չկան կրոնական ճնշումներ, դիակիզումը հաստատագրվել է հայոց պետության կողմից: Մինչդեռ, հուղարկավորության մեջ դիակիզման պրակտիկայի ներմուծումը հարիր չէ ո՛չ մեր եկեղեցու

ծիսաարարողական ավանդույթներին և ո՛չ էլ մեր ժողովրդի մտածելակերպին: Ցավոք, պետք է ասել, որ այս խնդիրն այսօր ներթափանցել է հայ իրականություն և դարձել եկեղեցու հրատապ մարտահրավերներից մեկը:

2006 թվականի փետրվարի 27-ին ՀՀ Ազգային ժողովում ընդունվեց «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենք, որի 8-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ մեր երկրի տարածքում հուղարկավորությունն իրականացվում է մահացածի մարմինը գերեզմանատների սահմաններում տրամադրված գերեզմանատեղերում հողին հանձնելու կամ դիակիզման միջոցով: Հիշյալ օրենքում բացի դիակիզման հարցերից, մանրամասն սահմանվել է նաև թաղվել ցանկացողների իրավունքների ու գերեզմանատների հատկացման հարցը: Ըստ այսմ՝ դիակիզման իրավունք է վերապահվում միայն նրանց, ովքեր մահանալուց առաջ կա՛մ անձամբ այդ մասին գրավոր համաձայնություն թողած կլինեն, կա՛մ էլ հարազատները գրավոր համաձայնություն կտան իրենց հանգուցյալի փոխարեն:

Օրենքի հեղինակը դիակիզման անհրաժեշտությունը նախևառաջ հիմնավորում է տարածքային խնդրով. Երևանը շրջապատված է գերեզմանոցներով, որոնք զբաղեցնում են մայրաքաղաքի տարածքի 7-8%-ը: Այսինքն՝ Հայաստանում տարածքները չեն բավարարում գերեզմանների համար: Սրա հետ մեկտեղ անդրադարձ է կատարվում նաև

սանիտարահիգիենիկ և բնապահպանական խնդիրներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դիակիզարանների կառուցման մասին իր դժգոհությունն ու առարկությունները հայտնել է 2007 թվականի ապրիլին, երբ ուժի մեջ մտավ «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքը: Ըստ այդմ՝ հիշյալ օրենքը հակընդդեմ է Աստծո պատվիրանին, եկեղեցու ծիսաարարողական ավանդույթներին, ինչպես նաև մեր ժողովրդի մտածելակերպին:

Աստվածաշնչում հուղարկավորության արարողությանը վերաբերող բազմաթիվ հատվածներ կան, որոնք վկայում են մարմինը հողին հանձնելու և ամբողջական մարմնով թաղելու մասին: Որևէ տեղ չեք գտնի մարմինն այրելու մասին հիշատակություն՝ որպես ընդունելի թաղման ձև: Ընդհակառակը՝ Սուրբ Գրքում մարմնի այրումն իբրև պատիժ է դիտվել. «Ես պիտի պատժեմ նրանց, քանի որ նրանք այրեցին Եդոմայեցիների թագավորների ոսկորները, մինչև որ դրանք մոխիր դարձան» (Ամոս Ա. 1):

Աստված պատժեց մովաբացիներին, որովհետև նրանք այրեցին Եդոմայեցիների թագավորների մարմինները: Պատժի պատճառը ոսկորների այրելն էր: Ակնհայտ է, որ նկատի է առնվում թագավորի ոսկորների այրումը: Սուրբ Գրքում չկան հիշատակումներ դրա դրդապատճառների մասին: Սակայն փաստ է, որ Աստված, այնուամենայնիվ, պատժեց նրանց: Մենք չպետք է անուշադրության

մատնենք այն փաստը, որ այդ արարքն Աստված հանցագործություն անվանեց:

Հիշյալ հատվածից ակնհայտ է դառնում, որ մարմնի այրումը, ըստ Աստծո պատգամների, Հին Կտակարանում դատաստանի և պատժի համար էր կիրառվում:

Նոր Կտակարանում նույնպես հանդիպում ենք բազմաթիվ հատվածների, որտեղ խոսվում է մարդկանց թաղման մասին: Լավագույն օրինակը մեզ՝ քրիստոնյաներիս համար, հենց ինքը՝ Քրիստոսն է:

Նա մեզ պես մարմնավոր կյանք ապրեց, սիրեց և տառապեց մինչև Իր կյանքի զոհաբերումը խաչի վրա, ապա թաղվեց, և ոչ թե դիակիզվեց և հարություն առավ՝ մեզ ևս խոստանալով մարմնավոր հարություն: Չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ Տիրոջ մարմինը ոչ միայն դրվեց գերեզմանի մեջ առանց այլակերպության, այլև մարմնի նկատմամբ խնամք և հոգածություն ցուցաբերվեց:

Գալով քիստոնեական եկեղեցիներին՝ նշենք, որ Անգլիկան և բողոքական ընտանիքի եկեղեցիներն ընդունում են դիակիզումը և ունեն անգամ հատուկ ծես նման արարողությունների համար: Կաթոլիկ եկեղեցին մինչև 1963 թվականը նզովում և արգելում էր դիակիզված ննջեցյալներին եկեղեցական ծեսով թաղելը: Սակայն, սկսած Վատիկանի II ժողովից (1962-1965թ.թ.), որոշակի հանգամանքներից ելնելով, Հռոմի Կաթոլիկ եկեղեցին հորդորում է, որպեսզի մարդկանց մարմինները մահանալուց հետո հողին հանձնվեն: Միևնույն ժամանակ դիակիզման արտոնություն է տրվում, պայմանով, եթե այն չի արվում եկեղեցու վարդապետության դեմ ուղղված որևէ պատճառով:

Նույն խնդրի առնչությամբ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Ա նշում է. «Դիակիզումը դուրս է ուղղափառ ավանդությունից, որովհետև մենք հավատում ենք, որ մարդկության պատմության վերջին մեռելները հարություն պիտի առնեն Քրիստոս Փրկչի Հարության նմանությամբ, այսինքն՝ ոչ միայն հոգով, այլև՝ մարմնով: Եթե մենք թույլ տանք դիակիզել մարդկանց մարմինները, խորհրդանշականորեն կմերժենք հիշյալ հավատքը: Իհարկե այստեղ խոսքը միայն խորհրդանշանների մասին չէ, քանի որ հողի մեջ թաղումով մարդկային մարմինն էլ փոշու է վերածվում: Բայց Աստված Իր իշխանությամբ փոշուց ու փտածությունից յուրաքնչյուրի մարմին կվերանորոգի: Դիակիզումը՝ այսինքը հանգուցյալի մարմնի գիտակցական ոչնչացումը, համարվում է համընդհանուր հարության հավատքի մերժում»:

Հայ Եկեղեցին դիակիզման հարցում հարազատ է մնում Աստվածադիր պատվիրանին և իր ավանդություններին՝ տեղի չտալով մարդկային օրենքին:

ԶԵԿՈՒՅՑ Բ

Հովհաննես Հովհաննիսյան
ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գերեզմանոցներ, դիակիզարաններ, թե՞ այլ լուծումներ Ավանդույթի ու արդիականացման միջև

Վերջին տարիներին Հայաստանում մեծ հնչեղություն ստացած քաղաքական, տնտեսական ու սոցիալական բազմաթիվ խնդիրներին զումարվելու եկան նաև գերեզմանատեղիների ու գերեզմանային տարածքներին այլընտրանք գտնելու մասին հասարակական քննարկումներն ու մտահոգությունները: Պետք է նշել, որ այդ խնդիրներն առնչվում են ինչպես քաղաքական ու տնտեսական, այնպես էլ՝ հասարակական ու կրոնական ոլորտներին:

Մեզանում գերեզմանատեղիների, գերեզմանային տարածքների ու դրանց այլընտրանք ստեղծելու մասին խոսակցությունները դիտարկվել են որպես «տաբու»: Հայկական ավանդույթներով առաջնորդվող մարդիկ խուսափել են այդ թեմայի շուրջ խոսակցություններից: Ավելին՝ միանշանակ մերժվել է որևէ նորարարություն այդ ոլորտում, որը կհակադրվեր հասարակական ավանդական նորմերին ու սովորույթներին, եթե անգամ այն էականորեն կարող էր նվազեցնել մարդկային հոգսերն ու առավել քիչ հոգեկան ու հոգեբանական խնդիրներ առաջացնել:

Այնուամենայնիվ, ավանդական ու անփոփոխելի համարվող այս ոլորտում վերջին տարիներին կատարվեցին որոշակի փոփոխություններ: Նախևառաջ ակտիվ խոսակցություններ սկսվեցին ոլորտի բարեփոխման շուրջ: Ապա երևան եկան տարբեր տեսակի կազմակերպություններ, որոնք մասնագիտական համապատասխան ծառայություններ են առաջարկում այս ոլորտում: Վերջին շրջանում նկատվում է նաև մահացածի դին եկեղեցիներում դնելու նոր սովորույթը՝ տներում դնելու մեզ ծանոթ ավանդական սովորույթի փոխարեն:

Բոլոր այս փոփոխություններն հիմնականում տեղի են ունենում ուրբանիզացված միջավայրում և, մասնավորապես, Երևան քաղաքում, քանի որ գյուղերում ու գյուղական շրջաններում դեռևս պահպանվում են արխայիկ սովորույթներն, ու այդ շրջաններում փոփոխությունները տեղի են ունենում առավել դանդաղ, քան՝ քաղաքային միջավայրում:

Հուղարկավորությունը դարեր շարունակ եղել է հայ ավանդական ծիսական կյանքի անբաժանելի մասնիկը, որը ժամանակի ընթացքում արմատավորվել է կենցաղում՝ դառնալով մի ավանդույթ, որի սակրալ բնույթն երբևէ կասկածի տակ չի դրվել: Հուղարկավորության ծիսակարգի ու գերեզմանների սակրալ բնույթին հակադրվող որևէ քայլ, խոսք կամ մտածողություն ոչ միայն չի ընդունվել, այլև համարվել է օտարամուտ երևույթ և մերժվել հասարակության գրեթե ողջ շերտերի կողմից: Նման ընկալումը պայմանավորված է եղել բազմաթիվ գործոններով, որոնցից առաջնայինը նախնիների նկատմամբ ունեցած պաշտամունքն ու հարգանքն է, որը հանգեցրել է տարբեր կարծրատիպերի ձևավորմանն ու զարգացմանը: Բնական է, որ սակրալ այդ ծիսակարգին կամ

տարածքին հակադրվող որևէ այլընտրանք մերժվել է հայ հասարակության կողմից:

Սակայն 21-րդ դարն իր հետ բերում է նոր իրողություններ, որոնք թելադրում են իրենց այլընտրանքները:

Այլընտրանքի ընկալումը հասարակության կողմից: Տեղեկատվության բացակայությու՞ն, թե՞ կարծրատիպ

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող տարաբնույթ փոփոխությունները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում չեն կարող ազդեցություն չունենալ եւրոպական ընտանիքին ինտեգրվել փորձող ու դեպի արևմուտք հեռահար նպատակներ հետապնդող Հայաստանի Հանրապետության վրա: Փոփոխվող աշխարհի այս միտումներն էլ ավելի են ուժեղանում տեղեկատվական անվերահսկելի հոսքերի պատճառով, որոնց արդյունքում ռացիոնալ կառավարիչները, մարդիկ ու հասարակությունները փորձում են յուրացնել այլոց պրագմատիկ փորձը՝ այդ ընթացքում հրաժարվելով նաև նախկինում ընդունված տարբեր կանոններից, նորմերից, ինչպես նաև ավանդույթներից ու սովորույթներից:

Ժամանակակից աշխարհում նմանատիպ փոփոխությունների շարքին են դասվում գերեզմաններին ու հուղարկավորության ավանդական ձևերին փոխարինելու եկած դիակիզարաններն ու դեռևս շատերին անծանոթ ռեզոմատորիաները:

Facebook սոցիալական ցանցում կատարած մեր հարցումը ցույց տվեց քանակական առումով բավականին հետաքրքիր մի պատկեր: «Կողմ ե՞ք արդյոք Հայաստանում

դիակիզարանների կառուցմանը» հարցին դրական պատասխան էր տվել 1052 հոգի, բացասական՝ 503-ը[1]:

Հարցման արդյունքով՝ դիակիզարանների կողմնակիցների քանակը կրկնակիորեն գերազանցում է դեմերին: Միաժամանակ, սոցիալական ցանցից օգտվողների մեծ մասը երիտասարդությունն է, որը նման իրավիճակներում հիմնական որոշում կայացնողը չէ: Բացի այդ հարցվածների մեծ մասը ծանոթ չէ հարցի իրական խնդիրներին: Սա ակնհայտ է դառնում, երբ հարցը վերաբերում է իրական կյանքում կատարվելիք կոնկրետ գործողություններին: Այս դեպքում կողմ արտահայտվածներից շատերը դառնում են բավականին զգուշավոր՝ հաշվի առնելով հատկապես հասարակական կարծիքն ու դրանից բխող խոսակցությունները:

Չնայած այն բանի, որ հայկական մամուլը շատ անգամներ անդրադարձել է գերեզմանների խնդիրներին ու դրանց այլընտրանքային միջոցներին, իսկ «Բնակչության հատուկ սպասարկում» ՍՊԸ աշխատակիցներն ու Երևաննախագիծ ինստիտուտի ինժեներները բազմիցս բարձրաձայնել են իրենց մտահոգությունների մասին, այնուամենայնիվ, հասարակությունը դեռևս հեռու է այս խնդրի վերաբերյալ բավարար տեղեկատվություն ստանալու հնարավորությունից ու ցանկությունից:

---

[1] Տե՛ս http://www.facebook.com/questions/10150438252257193/?qa_ref=qd. Վերը նշված արդյունքները կարող են փոփոխվել, քանի որ սոցիալական կայքում անընդհատ քվեարկում են: Լրագրող Արամ Անտինյանը «Փոշիացնել թե՞ հող դարձնել» հոդվածում անդրադառնում է դիակիզարանների հարցին ու նշում, որ «մեր սոցիոլոգիական հարցման մասնակիցների միայն 26 %-ը դրական վերաբերմունք ունի դիակիզարանների նկատմամբ: Նրանք կարծում են, որ Երևանի համար դիակիզարանների գոյությունն այլևս անխուսափելի է: 59 %-ը, սակայն, բացասաբար է վերաբերում դիակիզմանը՝ երևույթը մեր մշակույթին անհարիր համարելով»: Տե՛ս «Պիոներ», թիվ 4 (731), http://thepioneer.am/arm/731/weekly/economy/368.html:

Տարբեր ոլորտների առաջատար մասնագետներ ու գիտնականներ գերեզմաններին կամ գերեզմանոցային տարածքներին այլընտրանք գտնելու հիմնական խոչընդոտների շարքում մատնանշում են հատկապես ավանդույթներն ու կարծրատիպերը: Ի դեպ՝ եկեղեցական կամ քրիստոնեական մոտեցումները դիտարկվում են հենց ավանդույթի շրջանակներում և ոչ՝ որպես հավատքի կամ կրոնի կողմից թելադրվող պահանջ:

Գերեզմանն իբրև սակրալ տարածք: Ավանդու՞յթ, թե՞ ցուցամոլություն

Գերեզմանների այլընտրանքային լուծումներին հակադրվողները հիմնական փաստարկները խարսխում են ավանդույթի պահպանման ու նախնիների նկատմամբ «սրբազան հիշողության» վրա: Ժամանակի ընթացքում նախնիների պաշտամունքը վեր է ածվել նախնիների նկատմամբ հարգանքի: Այն դրսևորվել է տարբեր ծիսական արարողությունների միջոցով, ինչպես նաև նախնիներին հիշողության մեջ վառ պահելու տարաբնույթ «ադաթներով», այդ թվում՝ գերեզմանոցային ու տնային ատրիբուտներով: Հայ իրականության մեջ հուղարկավորության ծեսը և դրա հետ կապված ատրիբուտները պայմանավորում են գերեզմանային տարածքի սակրալիզացումը և դրա նկատմամբ սերնդեսերունդ շարունակվող պաշտամունքային մտածողությունը: «Մեր պապերի գերեզմանները» արտահայտությունն ինքնին սակրալ բնույթի հասկացություն է: Մեզանում պապերի գերեզմանների համար զոհվելը հավասարազոր է եղել հայրենքի պաշտպանությանը: Հայրենիքն ընկալվել է իբրև հայրենիք, քանի որ այնտեղ են «պապերի գերեզմանները»[2]:

---

[2] Այս առումով բավականին հետաքրքիր են մշակութաբան Յուլիա Անտոնյանի դատողությունները, որոնց համաձայն՝ գյուղում գերեզմանների նկատմամբ վերաբերմունքն էականորեն տարբերվում է քաղաքում տիրող իրավիճակից: Անտոնյանի դիտարկմամբ՝ «գյուղական

Վերջին տարիներին, սակայն, տեղի է ունենում ոչ միայն գերեզմանների, այլև հայրենիքի ապասակրալիզացում: Եթե նախկինում արտերկրում մահացած որևէ հայի ամեն գնով ցանկանում էին հուղարկավորել մայր հողում՝ Հայաստանում, ապա վերջին տարիներին հուղարկավորություններն իրականացվում են հենց բնակության վայրում, ինչը ցույց է տալիս, որ հայրենի հողը կորցրել է իր երբեմնի մոգական ուժը, և Հայաստանից դուրս ապրող հայորդիներից շատերն արդեն սկսում են կորցնել իրենց կապը հայրենիքի ու «պապերի գերեզմանների» հետ: Մեր այցելությունները Երևանի մի քանի գերեզմանատներ ցույց տվեցին, որ բավականին մեծ թիվ են կազմում անխնամ ու մոռացված գերեզմանները, ինչը նաև վերջին շրջանում տեղի ունեցած մեծ արտագաղթի հետևանք է: Հետաքրքրական է, որ վերջին շրջանում վիրտուալ տարածքում բացվել են նաև մի շարք վեբ-կայքեր, որոնք արտերկրում ապրող մեր հայրենակիցներին առաջարկում են հարազատների գերեզմանները խնամելու, նրանց շիրիմներին մոմ վառելու, խունկ ծխեցնելու և նմանատիպ այլ ծառայություններ (www.gerezman.am): Սա նշանակում է, որ գերեզմանոցային տարածքը ֆիզիկական տարածքից վեր է ածվում վիրտուալ տարածքի, որն էլ ինքնստինքյան փոխում է «գերեզմանոցային սակրալիզմի» բնույթը:

Այս տեսանկյունից՝ կարելի է եզրակացնել նաև, որ Հայաստանում և, հատկապես, Երևան քաղաքում

գերեզմանը գյուղի ծիսական կյանքի մի մասն է»: Գյուղական գերեզմանատունն իր նշանակությամբ երբեմն հավասար է նկատվում տարբեր սրբավայրերի, անգամ՝ եկեղեցիների ու այլ պաշտամունքային վայրերի հետ: Այս իրավիճակում բավականին բարդ է գյուղական համայնքների ծիսական կյանքում էական փոփոխությունների իրականացումը: Սակայն գերեզմանոցային խնդիրն առաջին հերթին վերաբերում է քաղաքային բնակավայրերին:

գերեզմանոցային տարածքների ու գերեզմանաքարերի ճոխ հարդարանքն ու շքեղություններն առավելապես սոցիալական բնույթի են, չեն առնչվում հոգևոր-կրոնական կյանքին, և հետապնդում են հասարակության մեջ սեփական ընտանիքի ու կլանի տեղն ու դերը ցուցադրելու և սեփական գերակա դիրքը վերահաստատելու նպատակներ:

Խնդրի օրենսդրական կարգավորումն ու իրական պատկերը: Պետական մեխանիզմների բացակայությունը

Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորություններին ու թաղման վայրերին, ինչպես նաև դիակիզարաններին վերաբերող խնդիրները կարգավորում են օրենսդրությամբ: Այնուամենայնիվ, չնայած օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի առկայությանը, նման խնդիրների լուծումները շարունակում են մնալ թերի կամ ընդհանրապես՝ անկատար:

Ողորտը կարգավորող ՀՀ «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին»[3] օրենքի անվանումից ինքնին պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունը օրենքի մակարդակով ընդունում է դիակիզարանների գոյության իրավունքը մեր երկրում: Օրենքի այս դրույթը, ըստ որոշ կարծիքների, արվել է ազգայնական գաղափարներով առաջնորդվող պահպանողական կառավարության կողմից՝ Հայաստանում առկա փոքրաթիվ նեոհեթանոսներին իրենց ավանդական ծեսով դիակիզման հնարավորություն տալու

[3] Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. փետրվարի 27-ին: Օրենքում որոշակի փոփոխություններ են կատարվել 2007թ. հոկտեմբերի 24-ին և 2008թ. դեկտեմբերի 26-ին: Այս մասին առավել մանրամասն տե՛ս ՀՀ ԱԺ պաշտոնական կայքը՝ http://www.parliament.am/legislation.php?sel=alpha&ltype=3&lang=arm#16.

նպատակով[4]: Այնուամենայնիվ, անգամ օրենքի առկայության պայմաններում նեոհեթանոսները դժվարությունների են հանդիպում, քանի որ նախ՝ երկրում չկան դիակիզարաններ և երկրորդ՝ մեծ է հասարակական ճնշումը: Ուշագրավ է, որ քրմապետ Սլակ Կակոսյանի մահից հետո կատարվել է գիշերային դիակիզում, իսկ մնացած արարողությունները կատարվել են թաղման հայկական ավանդական ծեսով:

Անդրադառնանք «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների, որոնք այդպես էլ մնացել են թղթին:

Օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետով սահմանվում է պետական մակարդակով «գերեզմանատների տարածքների քաղաքաշինական եւ բնապահպանական մոնիթորինգի անցկացումը», ինչը սակայն չի իրականացվում կամ իրականացվում է ոչ պատշաճ մակարդակով: Այս եզրակացությանն ենք եկել Երևան քաղաքի մի շարք գերեզմանատներ կատարած այցելություններից հետո: Համաձայն պետական չափորոշիչների՝ գերեզմանատների ու բնակավայրերի միջև պարտադիր է անտառային տարածքի առկայությունը՝ բացառելու համար քայքայվող մարմինների մանրէաբանական դաշտի տեղափոխումը դեպի խմելու ջրեր կամ ջրամբարներ: Կարելի է վստահաբար ասել, որ օրենքի այս պահանջը իսպառ բացակայում է Երևան քաղաքի շատ գերեզմանատների պարագայում: Ավելին՝ բուն գերեզմանատներում ևս բացակայում են կանաչ

[4] ԵՊՀ դասախոս Յուլիա Անտոնյանը նշում է, որ նեոհեթանոսները կարողացել են վարչապետ Անդրանիկ Մարգարյանի օրոք ներգրավվել օրենքի աշխատանքներում ու մտցնել դիակիզարանների անհրաժեշտության մասին դրույթը: Չնայած դրա մշակութաբան-հետազոտողը նշում է, որ նեոհեթանոսների առաջնորդ Սլակ Կակոսյանի դիակիզումը կատարվել է կիսաօրինական ձևով:

տարածքները, որոնք բնապահպանական ու առողջապահական նշանակություն կարող են ունենալ:

Մեր կարծիքով՝ «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքն ամենից հաճախ խախտվում է 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի մասով, որոնք վերաբերում են գերեզմանատեղի տարածքներին: Օրենքը մեկ ննջեցյալի համար սահմանում է 2.5 քառ. մետր: Ընտանեկան գերեզմանի համար տրամադրվող հողատարածքի առավելագույն չափը սահմանվում է 12 քառ. մետր, որը տրամադրվում է անվճար հիմունքներով: 12 քառ. մետրից ավելի տարածքը տրամադրվում է վճարովի հիմունքներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

Մեր կատարած հարցումներում հարցվածների մեծ մասը նշում են, որ այս ոլորտում առկա կոռուպցիան դրսևորվում է հատկապես գերեզմանատեղիներ հատկացնելու ժամանակ: Համոզվելու համար, որ գերեզմանատեղերի բաշխման հարցում օրենքը ոչ միայն չի պահպանվում, այլ խախտվում է ողջ ուժով, բավական է այցելել Երևան քաղաքի գերեզմանատներ, որտեղ հավելյալ գումարով ձեռք բերված գերեզմանատեղիների տարածքները հասնում են մինչև հարյուրավոր քառակուսի մետրերի:

Այս առումով պետք է նշել, որ չնայած օրենքը թույլատրում է հավելյալ գումարի դիմաց առավել մեծ տարածք վերցնել գերեզմանի համար, սակայն այդ գործընթացը, մեղմ ասած, այնքան էլ թափանցիկ չէ, և մեզ չհաջողվեց պարզել, թե կոնկրետ որքան գումար է ծախսվում հավելյալ մեկ քառակուսի մետր տարածքի համար: Նույնիսկ օրենքով նախատեսված ընտանեական գերեզմանի համար հողհատկացումը (12 քառ. մ.) հիմնականում կատարվում է որոշակի «մաղարիչից» հետո, որը սովորաբար տատանվում է 100-300 հազ. դրամի շրջանակներում:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետը ևս պարունակում է կոռուպցիոն ռիսկեր: Ըստ այս կետի՝ «նոր գերեզմանատեղի հատկացում կատարվում է միայն բաց գերեզմանատներում»: Սակայն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որոշ փակ կամ կիսափակ գերեզմատներում ևս եղել են հողհատկացումներ՝ լքված կամ երկար ժամանակ մոռացված գերեզմանոցների տեղում[5]:

19-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է գերեզմանների սահմանագծերի որոշման ձևն ու կարգը, որը ևս հաճախ խախտվում է:

Հիշատակելի են նաև բնապահպանական ու սանիտարահիգիենիկ նորմերի խախտումները: Մասնավորապես, օրենքի 20-րդ հոդվածում նշված է, որ գերեզմանատներ չի կարելի կազմակերպել լճերի, գետերի և մյուս բաց ջրամբարների ափերին: «Բնակչության հատուկ սպասարկում» ՍՊԸ-ի ինժեներ Ռազմիկ Հարությունյանի խոսքով՝ այս դրույթը խախտվել է Զեյթունի ջրամբարի կառուցման ժամանակ:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» մասում նշված է, որ գերեզմանների կազմակերպում չի թույլատրվում «անտառային ֆոնդի հողերում, հատուկ պահպանվող տարածքներում, բնակավայրերում՝ ընդհանուր

---

[5] Երևանի բնակիչ Անժելա Սարգսյանը, այցելելով կենտրոնական գերեզմանատանը գտնվող իրենց ընտանեկան գերեզման, հայտնաբերել էր, որ հոր կողքին թաղել են մի անծանոթ կնոջ: «Անմիջապես գնացի թաղման բյուրո, որն այդ ժամանակ ղեկավարում էր ոմն Ռոզան: Պարզաբանում պահանջեցի, իսկ տնօրենը միայն զոռում էր: Երբ վախեցրի, որ այդ հարցով կդիմեմ համապատասխան մարմիներին, Ռոզան խնդրեց, որ չբողոքեմ՝ խոստանալով, որ ինքն այդ հարցին լուծում կտա», - պատմում էր Սարգսյանը:Մեկ շաբաթ անց, Սարգսյանին զանգահարեցին և ասացին, որ խնդիրը «լուծվել» է. «Կնոջ դիակը գիշերվա ընթացքում հանել էին գերեզմանից և տեղափոխել ուրիշ տեղ: Ամիսներ անց պարզեցի, որ մեր ընտանեկան գերեզմանի տարածքը Ռոզան 7000 դոլարով վաճառել էր մի մեծահարուստի»: Այս մասին տե՛ս Գալուստ Նանյան, «Հայաստան. կոռուպցիան հասել է գերեզմանատներին», Կովկասյան լրատու, 12.06.2011թ.:

օգտագործման ենթակա զբոսայգիներում, պուրակներում, այգիներում և այլ կանաչ տարածքներում»: Օրենքի այս դրույթը ևս շատ դեպքերում ամբողջությամբ չի պահպանվում: (Օրինակ՝ Ծիծեռնակաբերդում կատարված թաղումները:)

Այսպիսով՝ այս ոլորտը կարգավորող ՀՀ օրենքի ոչ բոլոր դրույթներն են պատշաճորեն կատարվում գործադիր մարմնի ներկայացուցիչների կողմից: Մյուս կողմից՝ օրենսդրական կարգավորումը ևս բավարար մակարդակով չի ապահովում ոլորտի բնականոն գործունեությունը, քանի որ բազմաթիվ հարցեր դուրս են մնացել օրենքի շրջանակից, ընդունված որոշ դրույթներ էլ խմբագրման ու լրամշակման կարիք ունեն: Իսկ օրենքի մեջ կատարված փոփոխությունը, որտեղ նշվում է «կրոնական ավանդույթներին համաձայն» հուղարկավարություն իրականացնելու հանգամանքը, անհասկանալի է քաղաքացիական օրենսդրության և պետությունից եկեղեցու անջատ լինելու մասին սահմանադրական դրույթի առկայության պայմաններում:

Տարածքային խնդիրների արդիականությունը

Հայաստանում և, հատկապես, Երևան քաղաքում տարեցտարի առավել խնդրահարույց են դառնում գերեզմանատների տարածքները: Չնայած խնդրի օրեսդրական կարգավորմանը, այնուամենայնիվ, ոլորտում առկա կոռուպցիան ու հովանավորչությունը թույլ չեն տալիս խնդրի վերջնական կարգավորումը, ինչն էլ հանգեցնում է գերեզմանատների ահագնացող աճի:

Ոլորտը կարգավորող օրենքը սահմանում է գերեզմանատների տիպերը՝ փակ, կիսափակ ու բաց: Փակ գերեզմանատներում արգելվում է հուղարկավորությունը, ինչը, միշտ չէ, որ պահպանվում է:

Նախկինում բոլոր գերեզմանատները պետական էին: Այժմ դրանց փոխարինելու են եկել մասնավոր գերեզմանատները, որտեղ տարածքների գները վեր են

տրամաբանությունից: Մասնավոր գերեզմանատներում 4 ննջեցյալի համար նախատեսված տարածքի համար երևանցիները ստիպված են վճարել չորս հազար դոլար և դրանից ավելի, իսկ մարզերում գները տատանվում են 40-60 հազար դրամի սահմաններում: Հեռավոր գյուղերում թաղումները հիմնականում կատարվում են ընտանեական գերեզմանատներում, որի համար գյուղացիները չեն վճարում: Այդ է պատճառը, որ շատ դեպքերում ֆինանսական խնդիրներից խուսափելու համար քաղաքացին իր հանգուցյալին թաղում է գյուղում[6]:

«Բնակչության հատուկ սպասարկում» ՍՊԸ ինժեներ Ռազմիկ Հարությունյանը նշում է, որ «Երևաննախագիծ» ինստիտուտի նախնական հաշվարկներով՝ մինչև 2020 թվականը Երևան քաղաքին անհրաժեշտ կլինեն հավելյալ գերեզմանատարածքներ, քանի որ արդեն մոտակա տարիներին մայրաքաղաքում գերեզմանատարածքների լուրջ խնդիրներ են առաջանալու:

2009 թվականի փետրվարին ՀՀ կառավարությունը շրջանառության մեջ դրեց օրենքի մի նախագիծ, համաձայն որի գերեզմանատներում վճարովի հիմունքներով լրացուցիչ հողատարածք ձեռք բերելու համար Երևան քաղաքի բնակիչները մեկ քառակուսի մետրի համար պետք է վճարեին մեկ միլիոն դրամ, իսկ մյուս համայնքներում՝ 500 հազար դրամ: Օրենքի նախագիծն այդպես էլ մնաց թղթի վրա, իսկ ոլորտի կարգավորումը և հավելյալ տարածքների տրամադրումը՝ համայնքապետերի ու գերեզմանատների ղեկավարների տնօրինության տակ:

Երևան քաղաքում ներկայումս կա 27 գերեզմանատուն, որոնցից 11-ը՝ փակ: Գերեզմանատները զբաղեցնում են 540 քառ. կմ տարածք, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր մակերեսի 7-8%-ը:

---

[6] Տաթև Մեսրոպյան, «Երբ ապրելն ավելի մատչելի է, քան մեռնելը», 23.10.2011թ., http://1in.am/arm/armenia_society_38762.html:

Ռ. Հարությունյանը մեզ հետ զրույցում նշեց, որ 2011 թ. նոյեմբեր ամսվա դրությամբ Երևան քաղաքում գերեզմանների համար տրամադրված է ընդամենը 60 հա մակերեսով հողակտոր: Կառավարության որոշմամբ՝ այդ տարածքների 15%-ը նախատեսված է ճանապարհների համար, 20%-ը ՝ կանաչ տարածքների: Այստեղից հետևում է, որ թաղումների համար նախատեսված հողակտորները շատ ավելի քիչ են: Իսկ եթե հաշվի առնենք, որ մեկ տարվա ընթացքում նախատեսվում է շուրջ երկու հազար հուղարկավորություն, ապա պարզ է դառնում, որ մի քանի տարի անց Երևան քաղաքը, ինչու չէ նաև ողջ հանրապետությունը, կանգնելու են լուրջ խնդիրների առջև:

Հետաքրքիր է, թե ինչ են առաջարկում ոլորտի մասնագետները: Ինժեներ Ռ. Հարությունյանը նշում է. «Խնդրի միակ լուծումը Երևանում դիակիզարան կառուցելն է, որի համար համապատասխան մարմիններին ներկայացված են առաջարկներ: Դիակիզարանը միակ կառույցն է, որ 70-80%-ով կտնտեսի գերեզմանահողերը: Իսկ մինչև դիակիզարանի կառուցումը առաջարկվում է ընդարձակել գոյություն ունեցող գերեզմանատների տարածքները: Հակառակ դեպքում հուղարկավորությունները կկատարվեն ինքնակամ տարածքներում, եւ բացառված չէ՝ ջրագծերի վրա, սանիտարական գոտիներում, կանաչ տարածքներում, անտառներում և այլն: Պրոցեսը կդառնա անվերահսկելի, ինչը կվտանգի Երևան քաղաքում սանիտարական նորմերի պահպանմանը: Ուրեմն՝ մինչ դիակիզարանի կառուցումը պետք է ընդարձակվեն գերեզմանոցների տարածքները: Երկրորդ՝ Երևան քաղաքում պետք է կառուցվի դիակիզարան»:

«Բնակչության հատուկ սպասարկում» ՍՊԸ մի շարք աշխատակիցներ ևս պնդում են, որ իրենց կարծիքով՝ Երևան քաղաքի գերեզմանատեղիների խնդրի լուծման լավագույն տարբերակը նորարարական լուծումներն են: Իսկ Հայ Առաքելական Եկեղեցու մերժողական տեսակետի

վերաբերյալ նրանք հետևյալ հակընդդեմ հարցն են բարձրացնում. «Կրոնը թող պատասխան տա մի հարցի. հանգուցյալը հուղարկավորված է, գնում է նեխման պրոցեսը, գալիս է հորդառատ անձրև, հողը ներծծում է անձրևաջուրը, որը մոտենում է նեխած դիակին, հետագայում ինչ է լինում այդ ջրերին, ու եթե տակից էլ գրունտային ջրերն են բարձրանում»: Այսպիսով՝ խնդիրը նրանք դիտարկում են ոչ թե հոգևոր ավանդույթների դաշտում, այլ՝ տարածքային ու սանիտարական:

Գերեզմանատեղիների հատկացման ու դրանց հետ կապված կոռուպցիոն հիմնախնդիրներին է վերաբերում Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի «Կովկասյան լրատու» պարբերականում հրատարակված Գալուստ Նանյանի հոդվածը, որտեղ վերջինս ներկայացրել է իր մի քանի ամսվա հետազոտության արդյունքները: Լրագրողը պատմում է մի արատավոր երևույթի մասին, երբ գերեզմանատեղ ունեցողները վաճառում են իրենց գերեզմանի տարածքը մի քանի հազար դոլար գումարով[7]: Այս ոլորտում տիրող կոռուպցիան այնքան է տարածվել, որ դրա մասին խոսել է նույնիսկ վարչապետ Տիգրան Սարգսյանը[8]:

Հետաքրքիր է ազգագրագետ Մխիթար Գաբրիելյանի մոտեցումը: Նա կարծում է, որ խնդրի լուծումը դիակիզարանների կառուցումը չէ, քանի որ հայ հասարակությունը դեռևս պատրաստ չէ նման քայլի: Ազգագրագետի կարծիքով՝ ուղղակի պետք է կամային մոտեցումներ առաջարկել տվյալ հարցի համար և լուծել դրանք դիվերսիֆիկացված մոտեցումների միջոցով: Սոցիալական անհավասարությունը չշեշտելու համար նա առաջարկում է Երևան քաղաքից 15-20 կմ հեռավորության վրա, գյուղատնտեսության համար ոչ պիտանի

---

[7] Գալուստ Նանյան, «Գերեզմանային կոռուպցիան Հայաստանում», Կովկասյան լրատու, 24.07.2011թ.:

[8] Տե՛ս՝ նույնը:

տարածքներում անհամեմատ թանկ գներով ստեղծել «էլիտար» կամ «պսևդո-էլիտար» գերեզմանոցներ, որտեղ հարուստները կարող են մրցակցել գերեզմանների ճոխությամբ:

Վերլուծելով սակրալի ու աշխարհիկի սահմանները հայկական գերեզմանոցներում՝ Մ. Գաբրիելյանը նշում է, որ գերեզմանները պետք է լինեն այնպիսին, որ գերեզմանատուն այցելող մարդը զգա, որ հայտնվել է սակրալ տարածքում և ունի իր հանգուցյալի հետ հաղորդակցվելու հնարավորություն: Այդ իմաստով՝ «մոնոտոնությունը հանգուցյալի հետ նորմալ հաղորդակցություն ապահովելու միջոց է»: Ինքնին պատրաստ չլինելով իր հարազատների դիակիզմանը՝ նա պնդում է, որ գերեզմանատարածքների լուծման տարբերակ է նաև այդ նպատակով նախկին հանքատարածքների օգտագործումը, որոնք այլևս ոչ մի բանի պիտանի չեն:

Բնապահպանություն և առողջապահություն: Կլուծե՞ն դիակիզարաններն առկա խնդիրները

Գերեզմանատարածքներին ու հուղարկավորություններին առնչվող խնդիրներում էական տեղ են զբաղեցնում սանիտարահիգիենիկ ու առողջապահական հարցերը: Այդ հարցերի պարզաբանման համար զրուցել ենք բժիշկների, բնապահպանների, ոլորտի մասնագետների և հատուկ լաբորատորիայի աշխատակիցների հետ: Միևնույն ժամանակ մանրամասն վերլուծության ենք ենթարկել այս թեմայով «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության վավերագրական ֆիլմը (հեղինակ՝ Արմինե Մինասյան)[9], որտեղ հիմնական ուշադրությունը դարձված է խնդրի սանիտարահիգիենիկ կողմին ու բնապահպանական հարցերին: Ֆիլմում հողագետ ու բնապահպան Աշոտ Խոյեցյանը նշում է, որ ցանկացած

[9] Հաղորդման:

գերեզմանոց և գերեզմանամերձ տարածք բնապահպանական տեսանկյունից վտանգավոր են, քանի որ դիակների քայքայումը հանգեցնում տարբեր հարուցիչների առաջացման՝ ստեղծելով դրանց տարածման վտանգ: Այսպես՝ եւրոպական մի շարք երկրներում գերեզմանամերձ տարածքներում աճեցված մրգերի կամ բանջարեղենի գինը բավականչափ ցածր է, քանի որ մեծ է այդ դրանցից թունավորվելու վտանգը:

Բոլոր գերեզմանատները պետք է հետևեն բնապահպանական անվտանգության կանոններին, ինչը ենթադրում է, որ դրանք պետք է բնակելի տարածքներից գտնվեն որոշակի հեռավորության վրա, իսկ դրանց բաժանարար գծում լինեն անտառային տարածքներ: Ծառերի արմատները պաշտպանիչ շերտ են հանդիսանում գերեզմանոցների ու բնակավայրերի միջև, քանի որ արմատները կլանում են տարբեր մանրէներ ու հարուցիչներ և թույլ չեն տալիս դրանց թափանցումը խմելու ջրերի կամ բանջարաբոստանային կուլտուրաների մեջ:

Հայաստանի բազմաթիվ գերեզմանատներ չեն համապատասխանում սահմանված չափորոշիչներին: Մասնավորապես, բնակելի տների ու գերեզմանատների միջև նախատեսվում է առնվազն 20 մետր լայնությամբ անտառային շերտ՝ կանխելու համար տարբեր տեսակի մանրէների ներթափանցումը բնակելի միջավայրեր: Հակառակ դեպքում հնարավոր են տարբեր տեսակի թունավորումներ: Հայաստանում, սակայն, գերեզմանատների անկանոն աճը հանգեցրել է նրան, որ որոշ գերեզմանատներ հայտնվել են բնակավայրերին անթույլատրելիորեն մոտ: «Բնակչության հատուկ սպասարկում» ՍՊԸ ինժեներ Ռազմիկ Հարությունյանը մեզ հետ զրույցում նշեց. «Սովետական Միության չափորոշիչներով՝ գերեզմանոցների և բնակելի թաղամասերի միջև պետք

է լիներ 300 քառ. մ տարածություն: Զեյթունում, Նորագավիթում, կամ Քանաքեռում, երբ գերեզմանոցներ կային, բնակելի թաղամասներ գոյություն չունեին: Կառուցապատումներից հետո սանիտարական սահմանները վերացել են»:

Երևանի գերեզմանատներում կատարած մեր հետազոտությունը ցույց տվեց, որ ոչ միայն չեն պահպանվում այդ չափորոշիչները, այլև գերեզմանատներն ու բնակելի տները գտնվում են այնպիսի թեքությունների վրա, որոնք արդեն իսկ բնապահպանական ու սանիտարահիգիենիկ վտանգ են ներկայացնում: Այս առումով անթույլատրելի է նկատվում Զեյթունի ջրամբարի կառուցումը, որը գտնվում է գերեզմանատնից ցած: Վտանգ կա, որ անձրևաջրերը փտող դիակի ողջ մանրէաբանական դաշտը կարող են տեղափոխել դեպի ջրամբար ու տարբեր հիվանդությունների պատճառ դառնալ:

Սովորաբար վարակիչ հիվանդություններից մահացած ննվեցյալին թաղում են հերմետիկ փակված դագաղներով: Սակայն մասնագետներն այստեղ էլ են վտանգ տեսնում, քանի որ տարբեր պատճառներով (սողանքներ, երկրաշարժեր և այլն) այդ դագաղները կարող են բացվել ու համաճարակների սկիզբ դառնալ: Այդ պատճառով էլ ամենաապահով միջոցը համարվում է մարմնի դիակիզումը, երբ վերանում են բոլոր տեսակի մանրէները, իսկ առաջացած մոխիրը բնապահպանական տեսանկյունից իրենից ներկայացնում է ամբողջությամբ մաքուր միջավայր:

Հետաքրքիր են բժշկական համալսարանի դասախոս Գայանե Սարգսյանի դիտարկումները դիակիզման սանիտարահիգիենիկ պայմանների

պահպանման վերաբերյալ։ Նրա կարծիքով՝ դիակիզումը նորմալ երևույթ է, որը վաղ թե ուշ մուտք կգործի մեր առօրյա։ Այսուհանդերձ, նա նշում է, որ ինչպես ինքը, այնպես էլ հայ հասարակության մեծ մասը պատրաստ չէ դիակիզման։ Այս կապակցությամբ նա նաև նշում է հետևյալը. «Անհրաժեշտ է կատարել անվտանգ դիակիզում, այլ ոչ ինչպես հնդիկները՝ բաց այրումով։ Այրման ընթացքում տարբեր տոքսիկ նյութեր են առաջանում։ Իսկ դիակիզարաններում պաշտպանվում են անհրաժեշտ նորմերը։ Դիակիզումն էկոլոգիապես ավելի մաքուր է, քան հողին հանձնումը։ Հատկապես որ վերջին շրջանում արված էքսգումացիայի արդյունքները ցույց են տվել, որ մարմնի փտումը ավելի դանդաղել է, ինչը կապված է կոնսերվանտներով հարուստ մեր սննդի հետ։ Այս հանգամանքը միջազգային մակարդակով լուրջ անհանգստություն է առաջացնում։ Դիակի քայքայումից առաջացած տոքսիկ նյութերն անցնում են հողին ու դրանից հետո ջրին։ Վերջերս Հայաստանի շրջաններից մեկում գերեզմանոցի տոքսիկ նյութերը ներթափանցել էին մոտակա ջրհոր և թունավորումների պատճառ էին դարձել»։

Մասնագիտական գրականության համաձայն՝ թաղման հետևանքով գրունտային ջրերին են խառնվում այնպիսի նյութեր, ինչպիսիք են մերկուրին, մկնդեղը, ֆորմալդեհիդը։ Մտահոգություն են առաջացնում նաև ռադիոիզոտոպերը, որոնք մարմնի մեջ են հայտնվում թաղումից կամ մահվանից առաջ։ ՄԱԿ-ի՝ շրջակա միջավայրին վերաբերող զեկույցի արտանետումներին վերաբերող բաժնում նշվում է, որ աշխարհում դիակիզարաններից արտանետվում է դիոքսինի ու

ֆուրանի արտանետումների 0.2%-ը[10]: Սա բավականին լավ ցուցանիշ է, ինչը վկայում է, որ դիակիզարաններն էկոլոգիապես մաքուր միջոց են մահացած մարմնից ազատվելու համար:

Մեր հետազոտության ընթացքում, բազմաթիվ խնդիրներից բացի, առնչվել ենք նաև այնպիսի տվյալների, որոնք պարզապես սարսուռ են առաջացնում: Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի ուսանողներից մեկը պատմեց, որ իրենց ուսանողներից շատերը լաբորատոր փորձարկումների համար գերեզմանատներից մեկից մարդու գանգեր ու ոսկորներ են գնել: Ավանդույթների ու ծեսերի մասին մտորող շարքային հայը, այս լսելուց հետո, անպայման կնախընտրեր դիակիզումը, թեկուզ միայն այն պատճառով, որ իր նախնին կամ հարազատը մահվանից հետո չդառնա որևէ լաբորատոր փորձարկման նմուշ:

Չնայած այս ամենին Հայ Առաքելական Եկեղեցին շարունակում է հավատարիմ մնալ ավանդույթին ու ամեն կերպ հակազդել Հայաստանում դիակիզարան կառուցելու փորձերին: Այս մասին հայտնել է «Երևաննախագիծ ինստիտուտ» ՓԲԸ գործադիր տնօրեն Սիրեկան Օհանյանը , ով Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի հասարակական քննարկումների ժամանակ խոսել է դիակիզարանների անհրաժեշտության մասին[11]:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տեր Կոմիտաս վարդապետ Հովնանյանը, ներկայացնելով Հայ Առաքելական Եկեղեցու դիրքորոշումը, դեմ է արտահայտվում դիակիզարան կառուցելու առաջարկին: «Եկեղեցին,

---

[10] Տե՛ս EMEP/CORINAIR Atmospheric Emission Inventory Guidebook, 3rd edition, October 2002. Technical report #30 Incinerations of Human Bodies:

[11] «Հայկական ժամանակ» օրաթերթ, սեպտեմբեր 29, 2011:

հատկապես Հայ Առաքելական Եկեղեցին, անշուշտ, չի ընդունում դիակիզությունը, որովհետև մենք հավատում ենք, որ նույն մարմնով Քրիստոսը համբարձվեց երկինք, և վերջին դատաստանի օրն ամեն մեկ քրիստոնյա նույն մարմնով պետք է հարություն առնի և ներկա գտնվի վերջին դատաստանին: Հետևաբար՝ մեր եկեղեցին կտրականապես մերժում է դիակիզությունը»,– նշում է հայր Կոմիտասը[12]:

Իբրև դիակիզարանների հակակշիռ վարդապետն առաջարկում է դամբարանների կառուցումը, որտեղ կտեղավորվեն ավելի շատ դիակներ, քան սովորական գերեզմաններում: Սակայն նույնիսկ այս դեպքում, դիակիզարանների կողմնակիցները պնդում են, որ 4 ննջեցյալի համար նախատեսված 12 քառ. մետր տարածքում հնարավոր է տեղավորել առնվազն 36 աճյունասափոր, իսկ ավելի խորը դնելու դեպքում աճյունասափորների քանակը կարելի է եռապատկել կամ քառապատկել: Ի տարբերություն ավանդական թաղման ծիսակարգի դիակիզարանները կարող են ունենալ հետևյալ առավելությունները.

- տարածքների տնտեսում 50-ից մինչև 100 անգամ, քաղաքային հողերի ռացիոնալ օգտագործում
- առողջությանը և կյանքին սպառնացող վտանգների իսպառ բացակայություն, քաղաքի էկոլոգիական վիճակի բարելավում, սանիտարահիգիենիկ լարվածության նվազեցում
- հուղարկավորության ծախսերի կրճատում 25-40%-ով
- կոլումբարիումների[13] անվտանգության ապահովում, գերեզմանոցային վանդալիզմի բացառում[14]

---

[12] «Թաղե՞լ, թե՞ այրել մահացածի մարմինը» բանավեճ, տե՛ս http://www.tert.am/am/news/2011/07/07/corps3/:

[13] Կոլումբարիումը (լատ.՝ columba - աղավնի) մահացած ու դիակիզված մարդկանց մոխրի պահպանման վայրն է, որը սովորաբար լինում է պատի տեսքով: Այն սկզբնապես եղել է աղավնիների տեղավորման վայր, որտեղից էլ առաջացել է անվանումը:

- ննջեցյալների հուղարկավորության տարատեսակ հնարավորությունների, ինչպես նաև ազատ ընտրության ընձեռում, որը նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ

- դիակիզարանների ու կոլումբարիումների առկայությունը կարող է փոխել գերեզմանատների արտաքին տեսքն ու փոխել մարդկանց գեղագիտական ճաշակը:

Դիակիզարաններին հակադրվող մարդկանց մի մասը նշում է, որ դիակիզարանները կդառնան կոռուպցիայի մի նոր առիթ: Մասնավորապես, պատգամավոր Վարդան Խաչատրյանը պնդում է. «Դիակիզարանները կսարքեն, փողերը կուտեն, կսկսեն ստիպել մարդկանց, որ գնան դիակիզարաններ, կառաջացնեն կաշառակերության հսկայական մի նոր դաշտ, և մենք գործ կունենանք այսուհետ նմանատիպ իրավիճակի հետ»:

Նման մտավախություններ լսել ենք տարբեր մարդկանցից: Սակայն պետք է նշել, որ համապատասխան չափորոշիչներ և որոշակի կանոնակարգ սահմանելու դեպքում կոռուպցիոն ռիսկերը կհասցվեն նվազագույնի:

Վերջաբան

Գերեզմանատաների ու դրանց հետ կապված համալիր հարցերի լուծումը պարբերաբար հայտնվում է մամուլի, հեռուստատեսությունների ու պատկան մարմինների ուշադրության կենտրոնում, սակայն հիմնականում իրադարձային լուսաբանումներում: Հարցերի համալիր քննարկում և խորքային վերլուծություն այդպես էլ չի կատարվել:

---

[14] Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանում գերեզմանոցային վանդալիզմի դեպքերը գնալով աճում են: Ազգագրագետ Մխիթար Գաբրիելյանը մեզ հետ զրույցում պատմեց ազգագրության ամբիոնի նախկին վարիչ Յուրա Մկրտումյանի ծնողների հետ կապված դեպքը, երբ թալանվել էին վերջինիս ծնողների բրոնզե հուշատախտակները:

Գերեզմանատների հարցն առնչվում է սոցիալական, քաղաքական, հոգեբանական, էկոլոգիական, հոգևոր-կրոնական, տնտեսական և մի շարք այլ խնդիրների: ՀՀ-ում գերեզմանատների հետ կապված խնդիրները ոչ միայն կոռուպցիոն լուրջ ռիսկեր են պարունակում, այլև կարող են վնաս հասցնել մարդու հոգեբանական ու ֆիզիկական առջողջությանը, ինչն էլ ավելի է կարևորում խնդրին պատշաճ ու համակողմանի մոտեցման անհրաժեշտությունը:

Նշված բոլոր խնդիրները պահանջում են նորարական լուծումներ: Այս իմաստով հնարավոր է դիակիզման ներմուծումը Հայաստան, որի օրենսդրական հիմքերն արդեն իսկ առկա են:

ԱՄՓՈՓՈՒՄ

- Դիակիզման երևույթը և դիակիզարանները մեր հասարակության մեջ դեռևս խորթ երևույթներ են, չնայած այն բանի, որ թույլատրված են «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքով: Միաժամանակ ապագայում չի բացառվում դիակիզման կիրառումը՝ իբրև հուղարկավորության այլընտրանքային ձև Հայաստանում:

- Դիակիզարանների կառուցման անհրաժեշտությունը Հայաստանում հիմնավորվում է հետևյալ հիմնական փաստարկներով.
    1. գերեզմանային տարածքների սակավություն,
    2. սանիտարա-հիգիենիկ և բնապահպանական խնդիրների բացառում,
    3. ֆինանսական առումով հուղարկավորության կազմակերպման առավել մատչելի հնարավորություն,
    4. գերեզմանատեղերի բաշխման գործում կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:

- Դիակիզումը Հայաստանում շարունակում է մնալ խնդրահարույց հոգեբանական և ազգային-կրոնական տեսանկյունից՝ հրապարակ բերելով մի շարք հարցադրումներ.
    1. որքանո՞վ է հայ հասարակությունը հոգեբանորեն պատրաստ հրաժարվելու հուղարկավորության

ավանդական ձևից եւ հաշտվելու դիակիզման երևույթի հետ,

2. արդյո՞ք ժամանակը կկարողանա փոխել հասարակական մտածողությունն ամրագրված ավանդույթի նկատմամբ,
3. արդյո՞ք հնարավոր է համադրել հուղարկավորության եկեղեցական ծեսի խորհուրդը դիակիզման երևույթի հետ։

- Հայ Առաքելական Եկեղեցին մերժում է դիակիզման երևույթը։ Այն նոր մարտահրավեր է Հայ Առաքելական Եկեղեցու համար, որը պահանջում է աստվածաբանական և հովվական փորձառության մոտեցումների տարբերակում և հասարակության պահանջների հետ համընթաց քայլերի կիրառում։

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 27.02.2006

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան եւ նպատակները

Սույն օրենքը կարգավորում է գերեզմանատների եւ դիակիզարանների շահագործման հետ կապված իրավահարաբերությունները եւ սահմանում է հուղարկավորության արարողությունների կազմակերպման պետական կարգավորման հիմնական սկզբունքներն ու պայմանները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

հուղարկավորություն՝ մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) հողին հանձնելու կամ դիակիզելու արարողություն.

գերեզմանատուն՝ քաղաքաշինական եւ բնապահպանական նորմերին համապատասխան տրամադրված, հատուկ նշաններով առանձնացված հողատարածք գերեզմանատեղեր տրամադրելու եւ գերեզմանները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով պահպանելու համար.

մասնակի փակ գերեզմանատուն՝ գերեզմանատուն, որտեղ սպառված են նոր գերեզմանատեղերի համար տրամադրվող հողատարածքները եւ որտեղ կարող է հուղարկավորություն կատարվել միայն նախկինում հատկացված գերեզմանատեղում գերեզմանի համար ազատ տարածքի առկայության դեպքում.

փակ գերեզմանատուն՝ գերեզմանատուն, որտեղ հուղարկավորություններն ընդհանրապես արգելված են.

պանթեոն՝ գործող գերեզմանատների սահմաններից դուրս առանձնացված տարածք՝ հասարակության եւ պետության հանդեպ նշանակալի ծառայություններ մատուցած անձանց հուղարկավորելու համար.

բաց գերեզմանատուն՝ գերեզմանատուն, որտեղ կան ազատ տարածքներ հուղարկավորություններ կազմակերպելու համար.

գերեզման՝ գերեզմանատեղ, որտեղ իրականացվել է հուղարկավորություն.

հուղարկավորության կազմակերպումը ստանձնողներ՝ մահացածի կամքով նշված կամ դրա բացակայության դեպքում հուղարկավորության արարողության կազմակերպումը կամովին ստանձնած անձինք (ամուսին, հարազատներ, ազգականներ եւ այլն).

վրահուղարկավորում՝ հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձի ցանկությամբ իր անունով հաշվառված գերեզմանատեղում նախկինում մահացածի գերեզմանի վրա նոր հուղարկավորություն կազմակերպելը.

վերահուղարկավորում՝ հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձի ցանկությամբ մահացածի մարմինը (աճյունը) գերեզմանից այլ գերեզման տեղափոխելը.

դիակիզում՝ մահացածի մարմնի կիզումը դրա համար նախատեսված հատուկ տեղում (դիակիզարանում).

մահացածի հարազատներ՝ պապը, տատը, ծնողները, զավակները , ամուսինը, քույրը, եղբայրը եւ թոռները:

Հոդված 3. Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների

շահագործման բնագավառում իրականացնում է Սահմանադրությամբ եւ օրենքով վերապահված լիազորություններ:

Հոդված 4. Պետական լիազոր մարմինը

Պետական լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եւ այլ իրավական ակտերով վերապահված լիազորություններ:

Հոդված 5. Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը

Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը ներառում է սույն օրենքը եւ այլ իրավական ակտեր:

Հոդված 6. Հուղարկավորությունների կազմակերպման սկզբունքները

Անձի կենդանության ժամանակ իր հուղարկավորության պայմանների վերաբերյալ նրա կամքի գրավոր արտահայտությունը կամ դրա բացակայության դեպքում հուղարկավորության

կազմակերպումն ստանձնողների ցանկությունը հաշվի է առնվում՝ կապված հուղարկավորման տեղի եւ ձեւի ընտրության, գերեզմանատեղի տրամադրման, գերեզմանի հետագա պահպանման հետ:

Հոդված 7. Հուղարկավորությունների կազմակերպման հետ կապված հարցերի պետական կարգավորումը

Հուղարկավորությունների հետ կապված հարցերի պետական կարգավորումը ներառում է՝

ա) գերեզմանատների տարածքների քաղաքաշինական եւ բնապահպանական մոնիթորինգի անցկացումը.

բ) գերեզմանատների զբաղեցրած հողերի իրավական հատուկ ռեժիմի եւ օգտագործման նկատմամբ սահմանափակումների սահմանումը.

գ) գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողերի օգտագործման սխեմաների հաստատումը.

դ) հուղարկավորությունները, վրահուղարկավորությունները, վերահուղարկա-վորությունները կազմակերպելու եւ գերեզմանների ու դիակիզարանների շահագործման գործընթացները սանիտարական օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելը:

Հոդված 8. Հուղարկավորությունների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հուղարկավորությունը իրականացվում է մահացածի մարմինը (աճյունը) գերեզմանատների սահմաններում տրամադրված գերեզմանատեղերում հողին հանձնելու կամ դիակիզման միջոցով:

Սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինները 2 օրվա ընթացքում ենթակա են դիակիզման Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Դիակիզումը կարող է իրականացվել նաեւ մահացածի կամ հուղարկավորությունը ստանձնողների կամքի գրավոր արտահայտությամբ:

2. Հաշվի առնելով հասարակության եւ պետության հանդեպ մահացածի ունեցած ծառայությունները՝ գործող գերեզմանատների սահմաններից դուրս՝ առանձնացված տեղերում, հուղարկավորությունը կարող է կազմակերպվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ դեպքերում:

3. Մահացածի կամքի գրավոր արտահայտությունը հուղարկավորության կազմակերպման վերաբերյալ կարող է իրականացվել իր նշած բնակավայրի գերեզմանատան սահմաններում՝ ազատ գերեզմանատեղի կամ նախկինում մահացած հարազատի գերեզմանի առկայության դեպքում:

Վրահուղարկավորումը կարող է իրականացվել գոյություն ունեցող գերեզմանում՝ հուղարկավորության կազմակերպումը ստանձնողների համաձայնությամբ, այդ տեղում վերջին հուղարկավորումից 15 տարի անց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Մահացածի կամ նրա հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի՝ հուղարկավորության կազմակերպման վերաբերյալ կամքի արտահայտության իրականացման անհնարինության կամ նման կարգի բացակայության դեպքում հուղարկավորությունը իրականացվում է մահացածի կենդանության օրոք նրա հաշվառման բնակավայրի համար նախատեսված գերեզմանատանը:

Այդ բնակավայրում գերեզմանատուն չլինելու դեպքում հուղարկավորությունը իրականացվում է բնակավայրին առավել մոտ գտնվող գերեզմանատանը:

Հոդված 9. Հասարակության եւ պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքերում հրաժեշտի ծիսակատարության եւ թաղման կազմակերպման կարգը

Հասարակության եւ պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքերում հրաժեշտի ծիսակատարության եւ թաղման կազմակերպման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 10. Հուղարկավորումը եւ վերահուղարկավորումը

1. Քաղաքներում հուղարկավորումն իրականացվում է մահվան վայրի պաթոլոգիաանատոմիական կենտրոնի տված մահվան պատճառի եզրակացության հիման վրա՝ մահվան մասին քաղաքացիական կացության գրանցման ակտերի գրասենյակի տված, իսկ գյուղական համայնքներում՝ համայնքի ղեկավարի տված մահվան վկայականի հիման վրա:

2.Յուրաքանչյուր թաղում կամ դիակիզում գրանցվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի) թաղումների կամ դիակիզումների գրանցման մատյանում, որն արխիվում պահվում է անժամկետ:

Մատյանում գրանցումից հետո գերեզմանատան տնօրինությունը տալիս է իր դրոշմակնիքով կնքված գերեզմանի վկայական, որը թաղման կամ աճյունասափորի տեղը հաստատող միակ փաստաթուղթն է:

Ընտանեկան գերեզմանատեղում հուղարկավորության փաստաթղթերի ձեւակերպումը կատարվում է գերեզմանի վկայականի (բնօրինակի) հիման վրա:

Գերեզմանի վկայականի ձեւը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3.Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար տրամադրվում է գերեզմանատեղ՝ մեկ տեղի հաշվով 2.5 քառ. մետր մակերեսով (2.5x1.0 մմ):

4.Ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող հողատարածքի առավելագույն չափը սահմանվում է 12 քառ. մետր, որը տրամադրվում է անվճար հիմունքներով, որից ավելի լինելու դեպքում տարածքը տրամադրվում է վճարովի հիմունքներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ չափով:

5.Նոր գերեզմանատեղ հատկացվելու դեպքում հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի մասնակցությամբ համապատասխան գերեզմանատան սահմաններում ճշտվում է նոր գերեզմանի տեղը, եւ գերեզմանատան տնօրինության կողմից տրվում է գերեզմանի վկայական:

6.Մահացածի հարազատների ցանկությամբ մահացածի մարմինը (աճյունը) կարող է վերահուղարկավորվել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

7.Ինքնասպանության, անհայտ պատճառից հանկարծամահության, մարմնական վնասվածքների հետեւանքով տեղի ունեցած մահվան եւ մահը հանցագործության հետեւանքով տեղի ունենալու կասկածի դեպքերում մահացածի մարմնի (աճյունի) հուղարկավորումը չի թույլատրվում առանց դատաբժշկական մարմինների թույլտվության:

8. Հուղարկավորումը, առանց մահացածի մարմնի հերձման, կարող է իրականացվել մահվան պատճառի մասին եզրակացություն տվող բժշկի տեղեկանքի հիման վրա:

9. Կայանալիք հուղակավորության մասին գերեզմանատան վարչակազմին պետք է ծանուցել մեկ օր առաջ:

10. Հանգուցյալի թաղումը կատարվում է մահվան պահից ոչ շուտ, քան 24 ժամ հետո:

11. Նոր գերեզմանատեղի հատկացում կատարվում է միայն բաց գերեզմանատներում:

Հոդված 11. Հուղարկավորությունների հետ կապված ծառայությունների մատուցման եւ սգո պարագաների վաճառքի կարգը

1.Հանգուցյալի դիակը գերեզմանատուն կարող է տեղափոխվել միայն դագաղով:

2.Ավտոդիատարների կայանումը թույլատրվում է միայն փակ կամ պարսպապատ կայանատեղերում կամ այդ նպատակի համար տեղական ինքնակառավարման մարմինների (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի) որոշմամբ առանձնացված հատուկ կայանատեղերում կամ ծառայություններին պատկանող համապատասխան տարածքներում:

Այլ վայրերում ավտոդիատարների կայանումը խստիվ արգելվում է:

3.Դագաղների, սգո ծաղկեպսակների եւ սգո այլ պարագաների վաճառքը կարող է իրականացվել միայն վարագուրապատված կամ մգացված ապակիներով առեւտրական նշանակության շինությունում՝ բացառելով դրանց արտաքին ցուցադրումը:

Հոդված 12. Թաղման եւ դիակիզման կարգերը

Թաղման եւ դիակիզման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 13. Հուղարկավորության կազմակերպման ստանձնողները

1.Հուղարկավորության կազմակերպման ստանձնողներ են համարվում այն անձինք, ովքեր կազմակերպում են հուղարկավորությունը՝ կամավորության սկզբունքով:

2. Մահացածի հարազատների, ազգականների եւ այլ անձանց կողմից հուղարկավորության կազմակերպումից հրաժարվելու կամ դրանց բացակայության դեպքում այն ստանձնում է քաղաքացու մահվան վերջին մշտական բնակության վայրի համայնքի ղեկավարը:

Ընդ որում, հուղարկավորության կազմակերպումը ստանձնողներ չունեցող մահացած քաղաքացիների հուղարկավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների կողմից մահացածի անձը պարզելուց եւ նրա մահվան հանգամանքները արձանագրելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

3.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների կողմից մահացածի անձը չպարզելու դեպքում հուղարկավորությունը կազմակերպվում է նշված մարմինների համաձայնությամբ այդ դեպքերի համար քաղաքացիական գերեզմանատներում նախատեսված տեղերում:

4.Համայնքի ղեկավարի կողմից հուղարկավորության կազմակերպման դեպքում համայնքի ղեկավարը ապահովում է համապատասխան մարմինների կողմից սույն օրենքի 16-րդ հոդվածում նշված մատուցվող պարտադիր ծառայությունները:

5. Համայնքի ղեկավարի կողմից հուղարկավորության կազմակերպման ստանձնման կապակցությամբ մատուցված պարտադիր ծառայությունները համարվում են պատվիրակված լիազորություններ, եւ դրանց հետ կապված ծախսերը փոխհատուցվում են պետական բյուջեի միջոցների հաշվին:

6.Եթե մահացած քաղաքացու գույքը ժառանգման իրավունքով անցել է համայնքին, ապա հուղարկավորության կազմակերպման համար համայնքի ղեկավարի կողմից մատուցված պարտադիր ծառայությունների հետ կապված ծախսերը կարող են փոխհատուցվել նաեւ այդ գույքի իրացումից ստացված գումարի հաշվին՝ համապատասխան գումարը վերադարձնելով պետական բյուջե:

Եթե մահացած քաղաքացու գույքը ժառանգման իրավունքով անցել է նրա ժառանգներին, իսկ հուղարկավորությունն իրականացվել է համապատասխան համայնքի ղեկավարի կողմից, ապա վերջինս օրենքով սահմանված կարգով իրավունք ունի ժառանգական զանգվածն ընդունած ժառանգներից պահանջելու իր կատարած ծախսերի փոխհատուցումը:

Հոդված 14. Ծառայողական գործունեության կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորությունը

1.Ծառայողական գործունեության կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կարող է սահմանվել հուղարկավորության այլ արարողակարգ:

2.Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց հուղարկավորությունը կազմակերպվում է զինվորական կամ քաղաքացիական գերեզմանատներում այդ նպատակով հատուկ առանձնացված տարածքում՝ մահացածի հարազատների համաձայնությամբ:

Հոդված 15. Ազատազրկման վայրերում, բուժհաստատություններում, ծերանոցներում եւ մանկատներում մահացած անձանց հուղարկավորությունը

1.Ազատազրկման վայրերում, բուժհաստատություններում, ծերանոցներում եւ

մանկատներում մահացած անձանց հուղարկավորությունը կազմակերպում են հուղարկավորության կազմակերպումն ստանձնած անձինք՝ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Հուղարկավորության կազմակերպման ստանձնողներ չլինելու դեպքում այն կազմակերպվում է տվյալ համայնքի ղեկավարի կողմից՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 16. Համայնքի ղեկավարի կողմից հուղարկավորության կազմակերպման դեպքում համապատասխան մարմինների մատուցած պարտադիր ծառայությունների ապահովումը

Համայնքի ղեկավարի կողմից հուղարկավորության կազմակերպման դեպքում համայնքի ղեկավարը ապահովում է համապատասխան մարմինների մատուցած հետեւյալ ծառայությունները.

ա) անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպում.

բ) դիահերձում.

գ) դագաղի հատկացում.

դ) մահացածի մարմնի (աճյունի) տեղափոխում գերեզմանատուն.

ե) հուղարկավորում.

զ) մետաղե ցուցատախտակի տեղադրում:

Հոդված 17. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված

սոցիալապես անապահով ընտանիքի անդամի հուղարկավորության կազմակերպման ծախսերի մասնակի փոխհատուցումը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքի անդամի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամին կամ հուղարկավորության կազմակերպումն ստանձնած անձին Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կողմից վճարվում է գումար հուղարկավորման ծախսերի մասնակի փոխհատուցման համար:

Հոդված 18. Հուղարկավորության կազմակերպումն իրականացնող մարմինները

1.Հուղարկավորության կազմակերպումը՝ գերեզմանատեղերի տրամադրումը, նրանց հաշվառումը, գերեզմանատների պահպանումն ու շահագործումը, իրականացվում է համայնքի ղեկավարի կողմից ստեղծված ոչ առեւտրային կազմակերպության միջոցով:

Երեւանում հուղարկավորության կազմակերպումն իրականացվում է Երեւանի քաղաքապետի կողմից՝ իր իրավասության սահմաններում:

2.Համայնքներում ավագանու որոշմամբ հուղարկավորության կազմակերպումը կարող է իրականացվել համայնքի ղեկավարի կողմից:

Հոդված 19. Գերեզմանատների կազմավորումը եւ դրանց հողերի դասակարգումն ու պատկանելիությունը

1.Գերեզմանատները կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետի) որոշմամբ՝ ըստ գտնվելու բնակավայրերի հաստատված գլխավոր հատակագծերի, հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաների հիման վրա:

2.Գերեզմանատները, ըստ պատկանելիության, կարող են լինել պետական եւ համայնքային, ըստ ավանդույթների՝ քաղաքացիական եւ զինվորական:

3.Գերեզմանատների զբաղեցրած հողերը դասվում են պատմական եւ մշակութային նշանակություն ունեցող հողերի շարքին:

4.Գերեզմանատների սահմանագծերը որոշվում են ըստ գլխավոր հատակագծի եւ հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմաների:

5. Նոր կազմակերպվող գերեզմանատների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, բարեկարգման, շահագործման եւ այլ աշխատանքներ կատարվում են Հայաստանի Հանրապետության համայնքների (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի) բյուջեների հաշվին:

Հոդված 20. Գերեզմանատների կազմակերպման համար հողատարածքների տրամադրումը

1. Նոր գերեզմանատների կազմակերպման, գործողների ընդլայնման համար հողատարածքների տրամադրումը կատարվում է տեղական ինքնակառավարման մարմինների (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի) կողմից հաստատված նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Գերեզմանատների կազմակերպում չի թույլատրվում հետեւյալ տարածքներում.

ա) ջրամատակարարման աղբյուրների եւ հանքային ջրերի սանիտարական պահպանման առաջին եւ երկրորդ գոտիներում, առողջարանների սանիտարական պահպանման առաջին գոտում.

բ) լճերի, գետերի եւ մյուս բաց ջրամբարների ափերին.

գ) ջրածածկվող, սողանքների եւ փլուզումների ենթակա եւ ճահճային գոտիներում.

դ) այն վայրերում, որտեղ ստորերկրյա ջրերի խորությունը առավելագույն հոսքի ժամանակ հողի մակերեսից չորս մետրից պակաս է.

ե) անտառային ֆոնդի հողերում, հատուկ պահպանվող տարածքներում, բնակավայրերում՝ ընդհանուր օգտագործման ենթակա զբոսայգիներում, պուրակներում, այգիներում եւ այլ կանաչ տարածքներում:

3.Մահացած անձանց հուղարկավորումը իրականացնելու նպատակով գերեզմանատներում հուղարկավորության կազմակերպման ստանձնողի անունով հաշվառվում է գերեզմանատեղ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4.Համապատասխան գերեզմանատեղում հուղարկավորության կազմակերպման համար իրավունքը փոխանցվում է ժառանգաբար:

5. Գերեզմանատեղերը տրամադրվում են սահմանված կարգով հաստատված գերեզմանատան հատակագծով (սխեմայով) նախատեսված հերթականությամբ եւ սույն օրենքով սահմանված չափերով՝ անվճար:

Հոդված 21. Գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողատարածքների իրավական ռեժիմը

1. Գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողատարածքները համարվում են անբաժանելի եւ չեն կարող բաժանվել ինքնուրույն հողամասերի:

2. Գերեզմանատների զբաղեցրած հողատարածքների սահմանները ամրագրվում են կադաստրային քարտեզներում եւ ամրացվում են տեղանքում:

Հոդված 22. Գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողատարածքների օգտագործման նկատմամբ սահմանափակումները

1. Գերեզմանատների կազմակերպման նպատակով տրամադրված հողատարածքներում արգելվում է նրանց նպատակային եւ գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն:

2. Գերեզմանատների տեղափոխման դեպքում դրանց զբաղեցրած հողատարածքները չի թույլատրվում օգտագործել գյուղատնտեսական նպատակների համար:

3. Պետական կարիքների համար գերեզմանատների զբաղեցրած հողատարածքները կարող են վերցվել գերեզմանատները սահմանված կարգով փակվելուց եւ վերահուղարկավորում կատարելուց հետո:

Հոդված 23. Գերեզմանատների փակումը, տեղափոխումն ու վնասազերծումը

1.Հուղարկավորությունների համար սանիտարահամաճարակային անվտանգության պայմանների խախտման դեպքերում գերեզմանատները ենթակա են վնասազերծման եւ փակման:

Փակված գերեզմանատներում վրահուղարկավորումներ կատարելն արգելվում է:

2. Սանիտարահամաճարակային իրավիճակ առաջանալու վտանգի դեպքում գերեզմանատները ենթակա են վնասազերծման եւ տեղափոխման Հայաստանի Հանրապետության կառավարության

սահմանած կարգով այդ դեպքերի համար նախատեսված միջոցների հաշվին:

3.Գերեզմանատան փակումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա:

4. Նոր գերեզմանների կազմակերպման համար ազատ հողատարածքների բացակայության դեպքում գերեզմանատները ենթակա են մասնակի փակման:

Մասնակի փակված գերեզմանատներում թույլատրվում է կատարել հուղարկավորություն միայն այն գերեզմաններում, որտեղ գերեզմանի համար կան ազատ տարածքներ, կամ վերջին հուղարկավորությունը կատարվել է 15 տարի առաջ:

Գերեզմանատների մասնակի փակման մասին որոշումները ընդունում են համապատասխան համայնքի ղեկավարները (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը):

Հոդված 24. Գերեզմանատների պահպանումը եւ շահագործումը

1.Գերեզմանատների գործունեության եւ պահպանման աշխատանքները կազմակերպում է համայնքի ղեկավարը (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը), իսկ շահագործման ընդհանուր կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հասարակական նշանակություն ունեցող գերեզմանատների (Եռաբլուր, Կոմիտասի անվան պանթեոն) եւ դիակիզարանների պահպանումը կատարվում է բյուջետային հատկացումների հաշվին՝ հաստատված տարեկան նախահաշվին համապատասխան:

2.Գերեզմանատների զբաղեցրած տարածքների շրջակա բնական միջավայրի վատթարացումը կանխարգելելու նպատակով ստեղծվում է սանիտարական եւ բնապահպանական մոնիթորինգի համակարգ:

3.Գերեզմանների ոչնչացման, դրանցում ամրակայված կառույցներին վնասի պատճառման եւ պղծման դեպքում մեղավորները օրենքով սահմանված կարգով ենթակա են պատասխանատվության:

Հոդված 25. Գերեզմանատներից եւ դիակիզարաններից օգտվելու կանոնները

Գերեզմանատներից եւ դիակիզարաններից օգտվելու կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 26. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հոդված 27. Անցումային դրույթ

Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով տրված գերեզմանի վկայականը հուղարկավորության կազմակերպումը ստանձնողների համար համարվում է սույն օրենքով սահմանված գերեզմանի հողատարածքի նկատմամբ նրանց հաշվառման իրավունքները հաստատող փաստաթուղթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

29.03.2006
ՀՕ-40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 24.10.2007

Հոդված 1. «Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրեն՝քի (27 փետրվարի 2006 թվականի, ՀՕ-40-Ն) 17-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 17. Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի հուղարկավորության կազմակերպման ծախսերի մասնակի փոխհատուցումը

Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի հուղարկավորության կազ՝մա՝կերպ՝ման ծախ՝սերի մասնակի փոխհատուցման համար տրամադրվում է դրամական օգնություն՝ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

19.11.2007
ՀՕ-235

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 26.12.2008

Հոդված 1. «Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-40-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «(Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «(Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի)» բառերը:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «(Երեւանում՝ Երեւանի քաղաքապետի)» բառերը.

2) 5-րդ մասից հանել «(Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի)» բառերը:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասից հանել «(Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի)» բառերը:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «(Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը)» բառերը:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասից հանել «(Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը)» բառերը:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Երեւանի ավագանու առաջին ընտրությունների արդյունքով Երեւանի ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ հաջորդ երկուշաբթի օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

15.01.2009
ՀՕ-12

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Դ Ի Ա Կ Ի Զ Ո Ւ Մ

(քննարկման նյութեր)

Ծրագրի ղեկավար՝ Տ. Վահրամ քահանա Մելիքյան

Օգնական՝ Ժորա սարկավագ Սարգսյան

Խմբագիր՝ Հեղինե Մկրտչյան

Կազմը՝ Backbone Creative Studio

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼՈՒ ՍԵՂԱՆ
ARMENIA ROUND TABLE
oikoumene
actalliance